Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 16-ի N 29-Ն որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Տեղական տուրքերի դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.
   1.1հիմնական շենքերի և շինությունների համար՝
   մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար չորս հազար հինգ հարյուր դրամ
   1.2 սյուն կետի.1.1 ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
   .200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ.
   1.3 .500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ
2. Ոչ հիմնական շենքեր և շինությունների համար՝
   2.1Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքեր և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,
   2.2 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքեր և շինությունների համար՝հազար հինգ հարյուր դրամ:
3. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքեր և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
   3.1 Չի նախատեսվում կցակառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխությունն՝ ինը հարյուր դրամ:

3.2 Բացի շենքեր և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների այդ թվում՝ ստորգետնյա հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սյուն կետի 3.1 ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սյուն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շենքեր և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3.3 Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների այդ թվում՝ ստորգետնյա շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սյուն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սյուն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3.4 Ճանապարհների, ոռոգման ցանցերի և խմելու ջրի ջրագծերի շինարարության կամ վերակառուցման շինարարական թույլտվությունների համար սահմանել՝ նախագծային արժեքի 0.04%-ը:

4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար հազար հինգ հարյուր դրամ.

5. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

5.1 ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար,յուրաքանչյուր եռամսյակի համար –մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 1500 դրամ:

5.2 .26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում երեք հազար հինգ հարյուր դրամ:

5.3 .50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ:

5.4 ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ:

5.5 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ:

5.6 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ:

6. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության, յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

7. Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

7.1հիմնական շինությունների ներսում մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

7.2 .26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար՝ երեք հազար դրամ:

7.3 .50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ:

8. Ոչ հիմնական շինությունների ներսում՝

8.1 Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր դրամ:

8.2 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հարյուր դրամ:

8.3 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար երկու հարյուր դրամ:

9. Ավազանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

9.1Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ վեց հարյուր դրամ:

9.2 Թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ՝ հազար երկու հարյուր դրամ:

9.3սոցիալական գովազդի համար՝զրո դրամ

9.4այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ

9.5Դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

10Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայությունն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ երեք հազար դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքում սահմանվում են վճարների հետևյալ դրույքաչափերը

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ չորս հազար դրամ:
2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը երկու հազար դրամ:
3. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երկու հազար դրամ:
4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար ՝ մեկ փաստաթղթի համար ութ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափերը՝

1. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 դրամ
2. Ծննդօգնություն
   թեթև միջամտություն՝ 1000 դրամ
   ծանր միջամտություն՝ 5000 դրամ

3.Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)

Մանր կենդանի՝ 100 դրամ

Խոշոր կենդանի՝ 200 դրամ

4 Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200-1000 դրամ

5 Ախտահանություն՝ 1 քառ. մետր 200 դրամ

6 Միջատազերծում (դեզինսեկցիա) 1 քառ. մետր 100 դրամ

7 Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1 քառ. մետր 200 դրամ

8 Արհեստական սերմնավորում՝ 5000 դրամ

9 Կենդանու հերձում.

Մանր կենդանի՝ 1000 դրամ

Խոշոր կենդանի՝ 3000 դրամ

10 Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից

Յուրաքանչյուր այցելությունը 1000-2000 դրամ

11 Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից

Մանր կենդանի՝ 1000 դրամ

Խոշոր կենդանի՝ 2000 դրամ

12 Կենդանիների հետսպանդային զննում

Մանր կենդանի՝ 1000 դրամ

Խոշոր կենդանի՝ 2000 դրամ

Աղբահանության վճարի դրույքաչափերը

Աղբահանության վճարը սահմանվում է՝

Կենցաղային աղբի համար՝

1. Ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ
2. Առևտրի այդ թվում շուկաների ,հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով 1քառակուսի մետր մակերեսի համար 50 դրամ
3. Կրթական,մշակութային,առողջապահական,սպորտային,նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար 3 դրամ:

՝ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ